

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ք. Երևան

N

1534-Ա

«22/10

2008թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ  
2007 ԹՎԱԿԱՆԻ ԳԵԿՏԵՍԲԵՐԻ 25-Ի N 1927-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի դ/ ենթակետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 28-ի N52 արձանագրային որոշմամբ հաստատված «2007-2015 թվականների Տուրերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի» դրույթները, «Կանաչ Լույսի Կոմիտեի» կողմից 2008 թվականի հոկտեմբերի 28-ից 30-ը կատարած այցի ընթացքում ներկայացված առաջարկները և նպատակ ունենալով ապահովել Հայաստանի Հանրապետությունում տուրերկուլոզով հիվանդների բուժման ուղղակիորեն հսկումը /DOT/, ինչպես նաև բացառելու բուժման սխեմաների խախտումներն ու ընդհատումները՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2007 թվականի դեկտեմբերի 25-ի N 1927-Ա հրամանով հաստատված «Պետական պատվերի շրջանակներում տուրերկուլոզի դեմ պայքարի կազմակերպման մասին» չափորոշչի II գլխի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Պոլիկլինիկաների տուրերկուլոզի դեմ պայքարի կաթինետներում աշխատում են բժիշկ-ֆիզիատորներ, թոքաբաններ կամ թերապևտներ, որոնք անցել են անհրաժեշտ վերապատրաստման դասընթացներ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Տուրերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպությունում և ունեն համապատասխան վկայական, իսկ նրանց արձակուրդի, բացակայության կամ հիվանդության դեպքում՝ թերապևտներ, որոնք անցել են անհրաժեշտ վերապատրաստման դասընթացներ՝ Հայաստանի Հանրապետության

Առողջապահության նախարարության «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպությունում և ունեն համապատասխան վկայական:

Տուբերկուլոզի դեմ պայքարի յուրաքանչյուր կաբինետում աշխատում է երկու բուժույր, որոնցից մեկն իրականացնում է բուժքրոջը վերապահված գործառույթները ՏԲ կաբինետում, մյուսը՝ ՏԲ կաբինետի կողմից հաշվառված հիվանդների բուժման սխեմաների խախտումները հնարավորինս բացառելու և բուժումը ուղղակիորեն հսկման տակ /DOT/ իրականացնելու նպատակով՝ այցելում է նշանակված օրը չներկայացած հիվանդների բնակության վայր, պարզում չներկայանալու պատճառը, կազմակերպում իր ներկայությամբ դեղորայքի ընդունումը, վարում բացատրական զրույց՝ բուժման սխեման խստագույնս պահպանելու անհրաժեշտության վերաբերյալ: Հիվանդի բնակավայր յուրաքանչյուր այցելության ժամանակ՝ բուժքրոջ կողմից լրացվում է տուբերկուլոզով հիվանդի դեղորայքի ընդունման ուղղակիորեն հսկման տնային այցի թերթիկ /հավելված 13/:

Գյուղական ամբուլատորիաներում /ԳԲԱ/ և Բուժակ-մանկաբարձական կետերում /ԲՄԿ/ տուբերկուլոզով հիվանդների բուժման ամբուլատոր փուլի ուղղակիորեն հսկման կազմակերպման և ապահովման պատասխանատու են համարվում ամբուլատորիաների տնօրենները, ուղղակիորեն հսկումն իրականացնում են ԳԲԱ-ների և ԲՄԿ-ների բուժույրերը: Տարածքային ՏԲ կաբինետից ստացված տեղեկատվության համաձայն՝ ԳԲԱ-ների տնօրենները ներկայանում են ՏԲ կաբինետ, ՏԲ կաբինետի ֆթիզիատորից ստանում իրենց սպասարկման տարածքի ՏԲ հիվանդների տվյալները: ՏԲ կաբինետի ֆթիզիատորի կողմից տրամադրվում են բուժման հստակ սխեմաները, նշանակված հակատուբերկուլոզային դեղամիջոցները /հավելված 14/, հիվանդի անհատական վարման ամսեկան թերթիկները /հավելված 15/ և ՏԲ հիվանդի բուժհաստատություն չներկայանալու դեպքում՝ տնային այցերի համար նախատեսված թերթիկները: ՏԲ կաբինետի ֆթիզիատորի կողմից, յուրաքանչյուր ամբուլատորիայի համար, հստակ սահմանվում է հաշվետվությունների /հավելված 16/ ներկայացման և նոր դեղամիջոցների ստացման հատուկ օր՝ յուրաքանչյուր ամսվա առաջին շաբաթվա ընթացքում:

Բուժման ուղղակիորեն հսկում /DOT/ իրականացնող բոլոր ՏԲ կաբինետները պետք է ապահովված լինեն միանգամյա օգտագործման բաժակներով, տարանջատված սովորական և բժշկական թափոնների համար նախատեսված աղբամաններով:

ՏԲ կաբինետի ֆթիզիատորը յուրաքանչյուր եռամսյակ, Առողջապահական Համաշխարհային Կազմակերպության ռազմավարությամբ նախատեսված հաշվետվությունների հետ միասին /գլուխ 6-րդ / մարզային ՏԲ համակարգողին և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպություն է ներկայացնում վերը նշված ձևերի կրկնօրինակները:

ԲԱ-ի մասնագետները, հիվանդների մոտ հակատուբերկուլոզային դեղամիջոցներից առաջացած որևէ կողմնակի երևույթ նկատելիս, անմիջապես արձանագրում են վարման քերթիկում և տեղյակ պահում ՏԲ կաբինետի ֆթիզիատորին: Ուղղակիորեն հսկման նպատակով կայացած յուրաքանչյուր այցի ֆինանսական փոխհատուցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալության կողմից տնային այցերի համար պետական բյուջեով նախատեսված գումարի չափով:»:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2007 թվականի դեկտեմբերի 25-ի N 1927-Ա հրամանը լրացնել նոր 13-րդ, 14-րդ, 15-րդ և 16-րդ Հավելվածներով՝ համաձայն Հավելված N 1-ի, 2-ի, 3-ի և 4-ի:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի պետական առողջապահական գործակալության պետ Ա. Տեր-Գրիգորյանին՝

1) ներկայացնել առաջարկություններ սույն հրամանով նախատեսված փոփոխությունների և լրացումների իրականացման մեխանիզմների ու փոխհատուցման գնի վերաբերյալ:

4. Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի Տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետներ ունեցող բուժկանխարգելիչ հաստատությունների տնօրեններին՝

1) Ի գիտություն ընդունել սույն հրամանի 1-ին կետով նախատեսված փոփոխությունը և ապահովել փոփոխությամբ նախատեսված գործառույթների կատարումը:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2009 թվականի հունվարի 1-ից:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի բժշկական օգնության կազմակերպման վարչության պետ, Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ղեկավար Վ. Պողոսյանին:



Հ.ԲՈՒՇԿՅԱՆ

5<sup>0</sup> *[Handwritten signature]*